



Թ. ՏԱՐԻ ԹԻԻ 20

Տ Ե Ր Ե Ն Ի Ս Ե Ն Ի

14 ՄԱՅԻՍ 1905

Կ. ՊՈԼՍՈՑ ՀԱՄԱՐ		ԳԱՌԱՌԱՑ ՀԱՄԱՐ		ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻ	
Ցարեկան	50 Ղրօ.	Ցարեկան	54 Ղրօ.	Ցարեկան	12 Յր.
Վեցամսեայ	25 »	Վեցամսեայ	27 »	Վեցամսեայ	6 »

ԳԱՌՆԻԿ ՍԱՐԳԻՍՅԱՆ ԵՒ ԸՆԿ

ՄԵԾ ՎԱԺԱՌԱՑՈՒՆ

ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԺԱՄԱՅՈՑՆԵՐՈՒ, ՇՂԹԱՅՆԵՐՈՒ ԵՒ ԳՈՀԱՐԵՂԻՆԱՑ

Կ. Պոլիս, ձիաղ Պեյ խանին սակ, Թիւ 16

Մասնաւորապէս կը խնդրուի ուշադրութիւն ընել ՍԱՐԳԻՍՅԱՆ անունը, կեղծող կարգ մը նորեկով ժամացոյցներուն որոնք հրապարակի վրայ կը երջին:

ՍԱՐԳԻՍՅԱՆ ժամացոյցները ջերմապէս կը յանձնարարուին ինչպէս նաեւ ԶԵՆԻԹՐ՝ քե՛
Կ. Պոլիս, եւ քե՛ Գաւառները, ուրկէ եղած յանձնարարութիւնք անմիջապէս կը կատարուին գոհացուցիչ պայմաններով:

Ծանօթ. — ԶԵՆԻԹ ժամացոյցները Բարիզի 1900 Արուեստահանդէսին մէջ ամենեւնի բարձր պարգեւին արժանացած են:


Հատը 40 փարս

ԱՐՏՈՆԱՏԵՐ — ԱՐՄԷՆ ԱՌԻՍԻՆԵԱՆ

(کتابخانه جهان) مصبسی — باب عالی جاده سی ۳۸

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ — ԶԻԶԱՆ ԳՐԱՏԱՆ

Կ. Պոլիս Պապը-Լէյի մասսէսի Թիւ 38



Սնկարելի է որ ընտանիք մը առանց կարի մեքենայի մնայ , բայց էական կէտն է լաւ մեքենայ մը ունենալ , որովհետեւ լաւ մեքենայ մը անթիւ և անհամար ծառայութիւններ կը մատուցանէ , մինչդեռ գէշ տեսակէ մեքենայ մը անվերջ դժգոհութեանց եւ սաղտուկի աղբիւր մըն է :

Բոլոր աշխարհ գիտէ թէ՝

Ս Ի Ն Կ Ե Ր

ՀԱՅԹԱՅԹԻՉ ԿԱՅՍ. ՊԱԼԱՏԱՆ

THE SINGER

MANUFACTURING COMPANY



Ձեռի , ոտի ու ոտի եւ ձեռի միանգամայն մեքենաներ կը գտնուին

մեքենան լաւագոյն է . սոյն մեքենան ամենէն կատարելագործուածը , հաստատունը եւ դիւրագործելին ըլլալուն բովանդակ աշխարհի

մէջ՝ ամէն մարդ Սինկերի մեքենան կը գտնէ :

Սինկերի մեքենաները կը ծախուին մի միայն Սինկեր Ընկերութեան վաճառատանց մէջ՝

ՀԱՅԹԱՅԹԻՉ ԿԱՅՍ. ՊԱԼԱՏԱՆ

ԲԵՐԱ

(1. Մեծ փողոց , Պօն Մարշէի դէմ , թիւ 343 եւ 343 կրկին .

(2. Մեծ փողոց , Կալաթա Սէրայի Լիսէին դէմ .

ԿԱԼԱԹԱ

(1. Սինկեր խան , Թիւնկի ետեւը .

(2. Գարաքէօյ , Թրամվէյի կայարանին դէմ .

ՊՈԼԻՍ

(1. Սուլթան համալ .

(2. Սուլթան Պէյազիտ , Թրամվէյի կայարանին դէմ , թիւ 13 .

ՍԿԻՐՏԱՐ

Զարչը Պօյու , թիւ 120 .

Կատարեալ երաշխաւորութիւն

Մասնահիշդեր գաւառներու բոլոր ֆաղաֆներու մէջ :

Սինկերի Ընկերութեան Կեդր. վարչատեղին կը գտնուի Բերա , Մեծ փողոց , թիւ 343 եւ 343 կրկին , Տիւղօղլուի տունը :

ՅԷՆԻՔՍ ՕԹԲԻՇԻԷՆ

ԿԱՅՍ. ԹԱԳ. ԱՌԱՆՁՆԱՇԵՈՐՀԵԱԼ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ՀԻՄՆՈՒՄԻ 1860 ԻՆ Ի ՎԻԷՆԱ

ԿԵԱՆՔԻ ՃԻԻՉ

ՀԻՐԵՆԷԻ ՃԻԻՉ

Դրամագլուխ եւ Պահեստի գումար

Դրամագլուխ եւ Պահեստի գումար

31,008,000 Ժրանգ

17,000,000 Ժրանգ

ՅԷՆԻՔՍ Լաւագոյն պայմաններով կ'ապահովագրէ ամէն տեսակ շէնք , ապրանք և կարասիք :

ՅԷՆԻՔՍ Լաւագոյն պայմաններով կը կնքէ ամէն տեսակ ապահովագրութիւնք մարդկային կանքի վրայ :

ՅԷՆԻՔՍ Լաւագոյն պայմաններով կ'ապահովագրէ , ամէն տեսակ ապրանք՝ չղգենաւի՝ եւ առաքատանաւի վրայ :

Ընկերութեան զրամատունն է ԲԻԷՏԻ ԼԻՈՆԷ , Ընդհանուր գործակալութեան գրասենեակն է Պոլիս , Ալեանաք խան , թիւ 11-16 :

Ընկերութիւնս կ'ընդունի իջգաւառս պատուաւոր ներկայացուցիչներ :

Լիազօր ներկայացուցիչ

Գ. ՅԷՐԱՏԵԱՆ



ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ԶԱԲԱԹԱԹԵՐԹ

ՏՆՕՐԷՆ-ԽՄԲԱԳԻՐ ՎԱՀԱՆ ՓԱՓԱԶԵԱՆ

Թ. ՏԱՐԻ Թիւ 20

ՇԱԲԱԹ

14 Մայիս 1905

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ալֆրամուրթեան դեմ. (հմբագրական). — ՎԱՀԱՆ ԹՕՇԻԿԵԱՆ: Լեռներ. (Բանաստեղծութիւն). — Ս. ԽԱԶՈՒՆԻ: Դարասկզբի դեղագիր (Հարբուխին դեմ). — ԹՈՐԳՈՄ: Դիւթանգ (Ոճանաւոր). — ԱՐՇԱԿ ԻՍՊԷՋԷՐԵԱՆ: Բանգ բոս . . . բարեպաշտ ուրումն (Խրատներ՝ բարեփոխում). — Բ. ԼՈՒԹԻԹԻՆԵԱՆ: Մասամբ ու Մա. րիամբ. — ԼԻԼԱ: Բառգիրք. — Ս. ԽՈՐԷՆ: Զուարթ ժամեր. — ԶԱԽԱՆ ՄՈՅՐԵԱՆ: 10,000 Տարի Սառնակոյի մը մեջ. (Հանրագիտակի թերթօն) LOUIS BOUSSENARD (Թարգմ.) Յ. ՏԷՐ-ՅԱԿՈԲԵԱՆ:

ԸՆԿԵՐԱՅԻՆ ՀԱՐՑԵՐ

ԱԼՔՈԼԱՄՈԼՈՒԹԵԱՆ ԴԷՄ

Ընկերային խիստ կարեւոր խնդիր մը կը յուզէ Մասիսի մէջ, նիւ-եօրք հաստատուած գրասէր վաճառական մը, Յ. Ս. Թաւշանճեան, առաջարկելով հայ գրողներուն, որպէս զի արբեցողութեան վնասները նկարագրեն, հանրութիւնը անկից զգուշացնելու համար «սրտաշարժ, մտազդեցիկ, համոզիչ և հրմտալից» գրութիւններ հեղինակեն և ջանան կարելի եղած դարմանները նշանակել զգաստութեան հրաւիրելու համար անոնք որոնք գերի եղած են այդ մոլութեան և գիշեր ու ցերեկ կը խմեն ու կը խմեն:

Յօդուածագիր վաճառականը այնքան օգտակար կը համարի ալքոլամոլութեան դէմ գրուելիք յօդուածներուն հրատարակութիւնը որ, մինչև իսկ մրցանակ տալ կը խոստանայ յօդուածներուն լաւագոյններուն և զանոնք հրատարակող թերթերուն, մրցանակներուն պայմանները ծանուցանելով կանխաւ իր այդ յօդուածին մէջ:

Մրցանակ չափերու յաւակնութիւնը առանց ունենալու, մեր այսօրուան խառնաճաճութեան նիւթ պիտի ընենք ընկերային այս կարեւոր հարցը որ իր ազդեցութեան շնորհիւ կրնայ մարդերու ճակատագիրները որոշել և այս տեսակէտով յիշատակելի գեր մը կը խաղայ ընկերային կազմակերպութեանց խնդիրին մէջ :

Մեր ըսելիքները զրելէ առաջ, խոստովանինք սակայն որ Մաւիւնի մէջ հրատարակուած այդ յօդուածը սպասուած « սրտաշարժ, մտազգեցիկ, համալիչ և համալից » գրութիւններուն չափ աւքոյլամուլ ընթերցողին վրայ ազդեցութիւն բանեցնելու յատկութիւնն ունի, զոր, համեստութեամբ, ծածկել կ'ուզէ յօդուածագիր վաճառականը, և զոր կը բազմայ վնասուել, ի սէր մարդկութեան, հայ գրողներու յօդուածներուն մէջ :

Զեմ գիտեր թէ ալքոլամուլութիւնը մ'ը երկիրներուն մէջ աւելի իր աւելորդ կը գործէ և աւելի մ'ը ժողովուրդն է որ անձնատուր կ'ըլլայ անոր, որովհետեւ քաղաքի մը մէջ գտնուող զինուորներուն քանակին չատուրէնէն չէ՝ որ կը հասկցուի ժողովուրդին ալքոլամուլութեան չափն ու սահմանը : Բայ ընդհանրապէս ահէն ժողովուրդ իր մէջ ունի ալքոլամուլներ, առաւել կամ նուազ աստիճանով, որոնք բնական է թէ միջավայրէ միջավայր, տարիքէ տարիք, տպաւորութենէ տպաւորութիւն կը տարբերին իրարմէ :

Ալքոլամուլութեան փաստերն ու դարմանը գծելէ առաջ, կարեւոր է սակայն անոր պատճառները պարզել և տեսնել թէ ի՞նչ բան է որ մարդս կը մղէ այդ սոսկալի ունակութեան որ կրնայ տանիլ մինչև գերեզման :

Այս բանին համար ալ պէտք է դասակարգի բաժնել ալքոլամուլները և ըստ այնմ վերլուծել խնդիրը, որպէս զի աւելի ամփոփ և աւելի նպատակայարմար ըլլայ մեր գրութեան սգին : Անշուշտ կ'լինէր չէ՝ որ մաս պիտի կազմեն այս դասակարգութեան, որովհետեւ, որքան ալ որ մեր Պոլսահայ տիկիներէն ոմանք գերի եղած են այդ մուլութեան, վերջապէս իրենց մուլութեան աստիճանը չը կրնար, բնական բերմունքով, այրերունը գերազանցել և հետեւաբար աղետալի հանգամանք մը առնել :

Դասակարգենք :

1. Ընտանիքի հայրերը :
2. Տուն տեղ ունեցող ամուրիները :
3. Տուն տեղ չունեցող ամուրիները :

Ընտանիքի հայր ըսելով, պիտի հասկնանք անշուշտ անոնք որ կ'լին, զաւակներ ունին, ընտանեկան հոգերով ծանրաբեռնուած են, և իրենցմէ կախում ունի ընտանեկան յարկին երջանկութիւնն ու անգործութիւնը :

Ամբողջ երկիրներու մէջ գիտուած է նախ որ, ալքոլամուլութիւնը ուղղակի տարրիւնք է տպաւորութեան մը զոր մարդ կրնայ ունենալ ու է տարիքի մէջ, օրուան ու է ժամերուն : Այս այսպէս ըլլալով, երբ կը տեսնենք թէ ընտանիքի հայր մըն է որ գլխատունի մը մէջ կը ճնկէ, իրարու ետեւէ պարպելով շիշերը, գիշերուան այն ժամերուն մէջ ուր փողոցները՝ ալ թափառականներուն հաճոյքի ժամերը կը պարզեն, կը ճնկէ ու կը ճնկէ առանց անգամ մը մտքէն անցը-

ներու թէ կինն ու զաւակները իրեն գալուն կ'սպասեն, անօթի ծարաւ, խեղճ կինը արիւն արցունք կը թափէ խորհելով որ արդեօք ի՞նչ վիճակի մէջ պիտի դառնայ ինք տուն, ու զաւակները, անմեղ հրեշտակներ, իրենց սրտածմբիկ ճիշերով. « Մայրիկ, անօթի ենք, հայրիկնիս գեռ չա՞տ ուշ պիտի գայ » կը պօռան, և մայրիկն ի զմէր կը փորձէ պատասխան մը գտնել հանգարտեցնելու համար զանոնք, ապահովաբար պէտք է կռահենք թէ նոյն այդ ընտանիքի հայրը զբժարող զո՞հ մըն է, թշուառութեան ճիրաններուն մէջ տապալակուլ, որ չը կրնալով իր ցաւը բաժնել կնոջը մէջ, գաղափարի և զգացումի անհամաձայնութեան մը հետեւանքով, իր սիրաւ կրծով վերքերուն դարմանը կը կարծէ գտնել ալքոլին ազդեցութեանը մէջ, մինչև իր տունն ու իրենները մոռնալու աստիճան, Մինչդեռ, շատ բնական է որ, եթէ ընտանեկան համաձայնութիւն մը գոյութիւն ունենար իր և կնոջ միջև, եթէ երկուքն ալ փոխադարձ կերպով սիրէին զիրար, այնպէս որ երկուքն ալ իրենց ցաւերուն վշտակից և ուրախութիւններուն խնդակից գտնուէին իրարու հանդէպ, թշուառութեան որ ծայրայեղ տատիւճանն ալ դար տապալել խեղճ ամուսինը, այս վերջինը իր վշտերուն դարմանը պիտի գտնէր կնոջը գուրդուրանքին և զաւակներուն ժպիտներուն մէջ, եթէ երբեք այդ պահերուն մարդկային վիշտերն արդէն կրնային իրրեւ վիշտ թաղամանուիլ և ծանր լուծ մը գնել մարդաց սրտերուն վրայ :

Ալքոլամիւ հայրը իր ընտանեկան յարկը չէ կրցած սիրել, որ ինքզինքն այսպէս յանձներ է օղիին և այսօրէն վաղը պատրաստ է իր ֆիզիքական առողջութիւնն ալ կորսնցնելու : Չէ՞ մի որ ալքոլը, իր չափազանց գործածութեանը մէջ, կը հատցնէ, կը մաշեցնէ մարդու մարմինը և բոլորովին ուժասպառ կ'ընէ զայն : Գանի՛ հայրեր կան որոնք այդ մոլութեան երեսէն այսօր իրապէս արդահատելի երեւոյթ մը կը պարզեն, ֆիզիքապէս փճացած մարդու մը ողորմելի կերպարանքով : Եւ չե՞ն տեսնուած միթէ մայրեր ու զաւակներ ալ որոնք ընտանիքի հայրերուն այս մոլութիւնը կը ժառանգեն և ուշ կամ կանուխ զոհերը կ'ըլլան այդ ահարկու ունակութեան : Ա՛լ ի՞նչ երջանկութիւն կրնայ սպասուիլ այն ատեն այդ ընտանեկան յարկէն որ ճշմարիտ գոփսք մը կը դառնայ և մօտալուտ անկումի մը ենթակայ կը հանդիսանայ :

Տուն տեղ ունեցող ամուսիններ ըսելով պիտի հասկնանք սնոնք որ հայր, մայր, քոյրեր, եղբայրներ ունին և ծնողքէ մը ոչ նուազ կարեւոր դեր մը՝ իրենց ընտանեկան յարկին երջանկութեանը մէջ :

Ինչ որ ըսինք ընտանիքի հայրերուն համար, նոյնը պիտի կրնանք ըսել նաև ասոնց համար, որոնք այդ մոլութեան գերին եղած են, ոչ այնքան ընտանիքի հայրերուն չափ ստիպողաբար, այլ աւելի իբր հաճոյամիւ :

Դիտուած է որ ասոնք ալ իրենց հաճոյքը իրենց տուններուն մէջ չը կրնալ գտնելէն է որ հետզհետէ ինքզինքնին օղիին յանձնած են, անոր 80 զը բարձրացնելով յաջորդաբար, թէև անուրանալի է որ չար ընկերներու օրինակներն ուլ մեծ դեր կը խաղան այս պարագային մէջ :

Այսպէս կամ այնպէս, ճշմարտապէս ցաւալի է որ ոչ նուազ թիւ մը ունին


նաև ասոնք Պոլսոյ մէջ, որոնք իրենց դարուն տարիքին բոլոր հրապոյնները կը կորսնցնեն, ընտանեկան յարկերու բարոյական և նիւթական կործանումին պատճառ կըլլան, և օրին մէկը վերջապէս, ա՛լ դադարած ինքզինքնուն տէրը ըլլալէ, ոչ կեանքը կրնան ապրիլ և ոչ ալ աշխարհիս վայելքները իւրացնել:

Տուն սեղ յ'ունեցող ամուրիները կը մնան, որոնց աւքոլամուրթիւնը բարեբաղդ արար միայն իրենց է որ կը մնասէ և հանրութիւնը ուղղակի չազդուիր անոր չարիքներէն, այնպէս որ աւելորդ կը համարինք ծանրանալ իրենց վրայ:

Ընտանիքի հայրերուն և տուն սեղ ունեցող ամուրիներուն աւքոլամուրթիւնն է որ աւելի արդաւանքի կը դարձնէ զիրենք, և հետեւաբար աւելի աւսման արժանի: Մեր կարծիքով, եզրակացելով իօսքերնիս, թըշուուտութիւնը — չափը և որակը խնդիր չէ — ուղղակի արդիւնք է աւքոլամուրթեան, որուն բուն դարմանը այդ թշուառութիւնը անհետացնել ջանալուն մէջ կը կոյանայ լոկ:

Թո՛ղ ամէն ընտանիքի հայր սիրէ իր կիներն ու զաւակները, թո՛ղ ամէն կին համերաշխ ըլլայ իր էրկանը հետ, որքան գաղափարով և զգացումով, թո՛ղ ամէն մայր կամ քոյր ջանք մը ընէ իր զաւակը կամ եղբայրը առնել և զիրենք հաճելի դարձնելու անոր, եթէ ոչ բոլորովին, որովհետեւ անկարելի է դարաւոր մոլութեան մը վերջ դնել, դոնէ մասամբ կարելի է առաջքը առնել այդ մահացու ունակութեան, որ, դժբաղդ իրականութիւն, քիչ մը քիչ շոհեր չէ որ կը տանի, ինչպէս ըսինք, մեր ընտանեկան յարկերէն:

ՎԱՀԱՆ ԹՕՇԻԿԵԱՆ



Լ Ե Ռ Ն Ե Ր Ը

Լեռներ՝ հսկայ ու խոհեղաւոր,
Կը պառկին հեռուն միշտ անօրօրեան՝
Ունց անգգայ փունք՝ դարաւոր,
Փախչող հովերը լկեղ կը փորձեն:

Վայրի ծաղիկներն անոնց կատարէն,
— Լուած արեւնու հագրիս պաշկերներ. —
Իրենց խոր վիշտը կուլան մեղմօրէն.
Տալով հովերուն՝ քոյլ ու անտաքեր:

Բայց լեռներն՝ անփոյթ, միշտ կը կանգնին լուռ
Յափացած իրենց հետ վայելքներէն,
Անհոգ կը նային հորիզոնին՝ ուր
Նոր սիրոյ կայծեր դիւրանք կը սփռեն:

Օրերը կանցնին՝ ձանձրոյթի նոպայ,
Ու անոնք վայելքն կ'ըմբռնեն նուրբ:
Կանանց արեւն ալ երբեմն անգգայ
Կըլլան անոնց պէս, աղսոս կիբերէն:

Ս. ԽԱՉԱՌԻՆԻ



ԴԱՐԱՍԿԶԲԻԿ ԴԵՂԱԳԻՐ

ՀԱՐՐՈՒԹԻՒՆ ԴԵՄ

Հարբուխ ըստածը, հիւանդութեան ո՛ր կարգին վերաբերելը չպիտի բացատրեմ, որովհետեւ փառք Աստուծոյ բժիշկ չ'եմ, այլ պիտի բաւականանամ նկարագրելով հարբուխ ըլլալու կամ չ'ըլլալու պարագայներու և դարմանելու եղանակին վրայ, և եթէ, դուք որ սրամիտ էք, բան մը հասկնաք ըսածներէս, ինծի բացատրեցէք, որպէս զի հարբուխ ըլլամ կամ չըլլամ:

Թէ ինչո՞ւ երիտասարդները շատ անգամ ենթակայ են հարբուխ ըլլալու և թէ ինչո՞ւ ես — չըսեմ ազնուութիւնս, վախնալով որ ձեզմէ շատեր ինձմէ բան մը աւելի ազնիւ ըլլալով պզտիկ կը մնամ հակառակ հասակիս երկայնութեան — հարբուխ ըլլամ և շարունակ հեփշու ընեմ, ասիկա իմ գիտնալիք բանս է, սակայն շատ կարելի է որ ձեր ալ գիտնալիք բանն է:

Հիմա խնդիր է գիտնալ թէ ինչո՞ւ ես հարբուխ ըլլայի. այս փէտը՝ որ աւագ կարեւորութիւն ունի, Աւագ Հինգշաբթի գիշերուան պէս մութ է թէ ինձ և թէ ձեզ, միայն պատճառ մը կայ հարկաւ հարբուխ ըլլալուս՝ որուն արդիւնքը ուրիշ բան չ'է, բայց եթէ բայի ուրիշ լաներէ հարբուխ ըլլալս:

Շատ տեղերու մէջ՝ շատ մարդիկ շատ հարբուխ ըլլալու շատ ենթակայ են, ինչպէս որ քիչ տեղերու մէջ քիչ մարդիկ քիչ հարբուխ ըլլալու քիչ ենթակայ են:

Սթիկա քին տեսա՞յ բացայայտ ճշմարտութիւն մըն է որ աղայուցուելու պէտք չունի:

Այսպէս Սկիւտարցիք Սկիւտարի մէջ քիչ հարբուխ կըլլան քան Կէսիկ բաշայի մէջ, և որովհետեւ Սկիւտար քիչ հարբուխ ըլլալու միակ վայրն է և նկատելով որ Սկիւտար հարբուխ եղողն ալ ոտքերով ձեռքերով կը ցուցոյն, կրնամ ըսել թէ, եթէ հարբուխ ըլլայի, փողոցէն անցած ատենս պատուհաններէն ոտքեր ու ձեռքեր զիս պիտի ցուցնէին:

Աղայուցանենք ճշմարտութիւնը ճշմարտութեամբ և աղայուցանելի ճշմարտանման ճշմարտութիւնն ալ ճշմարիտ փորձելով:

Ճշմարտութեան և աղայուցին մէջ գտնուածը փորձն է, ինչպէս երկու կէտերուն մէջ է՝ն կարճ ճամբան ուղիղ գիծն է:

Արդ բացարձակօրէն չեմ կրնար ըսել թէ ուղիւղով թէ չուղիւղով հարբուխ պիտի ըլլայի, այլ սա միայն կուզեմ հասկցնել Ձեզ թէ, ինչպէս Ազնուափայլ էրիկմարդեր, Մեծապատիւ տիկիւններ, Պրն. օրիորդներ, Ազ. քաղաքացիներ և զիւղայիներ, շուներ, կատուներ մուկներ, ո՞չիւններ և լուեր, . . . չուք Ալէմտաղցիներ (հոս պզտիկ գաղափար մը տամ այս վերջիններուն վրայօք):

Ալէմտաղցիք կըսեն թէ ամէն ձիւքերով օժտուած կատարեալ մարդերը իրենցմէ կը ծնին, ես ալ չուղիւղով ասոր հակառակը պնդել, կըսեմ թէ Ալէմտաղիէն մարդէն զատ ամէն բան կը ծնի:

Խեղճ Դիոգինէս փիլիսոփան, ականջը խօսի, արիւն քրտինք թաթխուած լապտերը ձեռքը ցրեկ ատեն բան մը կը փնտռէր, հարցուցին թէ ի՞նչ կը փնտռէ, «մարդ կը փնտռեմ» պատասխանեց: Եթէ գիտնար որ Ալէմտաղի անունով գիւղ մը կայ, հոն պիտի երթար և նոյնիսկ գիշեր ատեն առանց լապտերի դէմը ելլող մարդուն ձեռքէն բռնելով, պիտի պոռար, «դուայ այն մարդը դոր ի վաղուց կը փնտռէի»: Քիչ մը առաջ պիտի երթար և ահա ուրիշի մը ձեռքէն բռնելով պիտի ըսէր, «ահա ուրիշ մըն ալ» և այսպէս գիւղին ամբողջ տեղացիներէն խաթար մը կապելով արշալոյսին առջևը պիտի ձգէր ու հոն մօտակայ դաշտ մը պիտի տանէր. . . մարդագետնին վրայ անոնց որոճալը դիտելու), ինչպէս որ ենթակայ են հարբուխ ըլլալու ես ալ վերջապէս ենթակայ կրնայի ըլլալ և կարող էի հարբուխ ըլլալու: Ու եղաւ որ պաղառութեամբ մը հարբուխ ըլլամ, և ըլլալուս համար ազնուական քիթիս շատ բան կը պարտէի, որով քիթս պահանջող պիտի ըլլար ինձմէ բան մը հարկաւ, չեմ գիտեր ինչ, և ես պարտական պիտի ըլլայի քիթիս և որոնց ընդհանուր գումարը պիտի խնդրէի որ հաճէիք պարտքիս ու պահանջքիս անցունել, որուն համար կանխաւ հաճեցէք ընդունիլ:

ծանրագին շնորհակալութիւններու մեծար-
ժէք ծրարուած հաւատարմք :

Ինչո՞ւ հարուստ պիտի ըլլայի, ըլլալու
համար օգտակար է թէ փաստակար, դուք
ի՞նչ կըսէք, հարկաւ չըլլալը աւելի խելացի
է պիտի ըսէք, ինչպէս ես ըլլալը աւելի խել-
քով է պիտի ըսեմ. —

Ապացուցանենք ըսածնիս .

Խնդիրը բան մը ընել և ուրիշներուն շատ
մը բաներ երեւնալուն վրայ է, զոր օրինակ
եթէ ես հարբուի չըլլամ, ուրիշներուն ուշը
չպիտի գրաւեմ, կամ եթէ Ռուսիա պատե-
րազմ չմղեր, Ճաբոնցիք Մանչուրիա չպիտի
մտնէին և իրենց վրայ հիացողներ չպիտի
ունենային :

Իրաւ է որ ըսին թէ Ճաբոնցիներուն հը-
նարագիտութեանց վրայ հիացողներէն շա-
տեր, մատերնին խածքեր են, ես ալ ասոր
փոխարէն պիտի ըսեմ թէ ուրիշ շատ
մը բաներու վրայ շատ մը հիացողներ ոտ-
քերնուն մատերը խածին միմիայն իրենց ան-
կեղծ հիացումը արտայայտելու համար, բացի
մէկ՝ բարեկամէս որ ոտքին մատը խածաւ
վրայի կոշտը հանելու համար միայն և սա-
կայն դժբախտութիւնը սա եղաւ որ փոխա-
նակ կոշտը բրդնելու կտոր մը միս բրցուց :

Ինչպէս կը տեսնէք, ըսածիս մէջ չափա-
զանցութիւն չկայ, կրնաք հաւատալ և պէտք
է որ հաւտաք, քանի որ բարեկամս է ըսողը
այսինքն այն՝ որ հաճեցաւ իր ոտքին մատը
խածնել առանց դժուարութեան :

Հոս բացառաբար, աղին ընթերցող,
ներողութիւնիւ խնդրելով հարբուխով սկըս-
ուած այս գրութիւնս կոշտով չվերջացնելու
համար և հարբուխ ունեցողներուն վիճակին
ու կաց ու զիրքին ձեռ ալ իրազեկ ընելու
համար, ըսեմ որ, հարբուխ ունեցող մը

— Ստիպուած է իր խօսակցութիւնը հեփ-
շուով սկսիլ, հեփշուով համեմել և դարձ-
եալ հեփշուով վերջացնել . . . — վայ է
եկեր հետը խօսողին գլխուն :

— Շատ հեղ քիթին ծայրի կարմրութե-
նէն կրնայ հասկցուիլ և ուր կաթիլ մը հե-
ղուկ պատրաստ է իյնալու միշտ :

— Նրբեք չ'են քաշուիր անհաճոյ հեփ-
շունքու շարք մը տեղացնելէ հետզհետէ և
քիթին մէջի եղածը չ'եղածը՝ դուրս տալէ :

— Նոյնիսկ կարելի է ըսել որ այս հի-

ւանդութենէ վարակուողներէն շատեր իրենց
համակրողներուն շատերու ներկայութենէն
զրկուած են և չարաչար կարհամարեն այս
անճոռնի հիւրը որ իրենց քիթերնուն մէջ
մտած կը դժկամակի դուրս ելլելու . —

Ընդունելով որ հարբուխը իր այս գէշ
հետեւանքները ունի և ընդունելով որ հար-
բուխին տեւողութեանը վարակեալը ստիպ-
ուած է կարմիր քիթով պտտելու, չընդու-
նինք անոր անիծեալ ներկայութիւնը մեր
քիթերուն մէջ և կարելին ի գործ դնենք
տեղի չտալու այդ հիւանդութեան որուն
դարմաններն են միայն երիտասարդաց հա-
մար .

— Մուրացկաններու պէս իրենց ընտրած
փողոցէն տաան անգամէն աւելի չանցնիլ :

Իսկ օրիորդաց համար

— Գիշերները բաց պատուհաններու առ-
ջև չի նստիլ, չգիտեմ որու սպասելու :

Ահա այս իսկ է դարմանն այս վարակիչ
հիւանդութեան, զոր կը յանձնարարեմ ծա-
նօթ ու փնծանօթ երկսեռ երիտասարդաց :

ԹՈՐԳՈՄ



Թալարներուն շուրջը մենիկ է նըսած
Զբֆնադագեղ կոյս մը գուարք անխըռով,
Հըրապոյրի ցոլեք ցայտեն, ով Ասուած
Վառ աչքերէն այդ հուրիին հոգեթով :

Թիկնաթռնիմ վըրայ հանգչի սընապարծ,
Հոսոսելով ծաղկանց բոյրը անոճեակ.
Ըզզըլխելով խանդոս սիրեքը յանկարծ
Որոնք կեանքի դառնութեան են անգիտակ :

Ան պըչրասեք ձեւեր ունի, ո՛հ, ըսեմ,
Որոնք կուտան փրեն դեմքին գեղ ու փայլ.
Սակայն գիտե՛ք նուիրական ու վըսեմ
Յուցադըրել գինքն ամենուն անայլալ :

Թուրասանին մեջ բուսած են շուշան, վարդ,
ձերմակ, կարմիր միտ կը սքփոտեն քոյր ու բոյր,
Կոյսին ժըպսէն ալ կը բացուի սիրոյ վարդ,
Զիրար քովեն անուշեղենով համապիւր :

ԱՐՇԱԿ Դ, ԻՍԳԵԶԵՐԵԱՆ

ԲԱՆՔ ԸՍՏ . . . ԲԱՐԵՊԱՇՏԻ ՈՒՐՈՒՄՆ

[ԽՐԱՏՆԵՐԻ ԲԱՐԵՓՈՒՆՈՒՄ]

— Բարիք ըրէ գրացիիդ ամէն օր եթէ ան դեղանի . . . ազջիկ մը ունի :

— Փառք տուր միշտ Աստուծոյ որ դը-
դումը գեանին և մեր գրագէտներէն մէկ
քանին գրական դաշտին ցանկապատներուն
վրայ բուսցուցած է, եթէ ոչ . . .

— Պարկեշտ և առաքինի մարդու համ-
բաւ չինելու համար, ձեր տունը քակեցէ՛ք
և ուրիշին տունը չինեցէ՛ք :

— Աստուծոյ աղօթելու պէս նուազա-
հանդէս, և նուազահանդէս երթալու պէս
եկեղեցի պէտք չէ երթալ :

— Նախընտրելի է միշտ, երկու չարեաց
փոքրագոյնը . . . եթէ քովդ կին մը ու-
նենաս :

— Աղւոր ընկերուհի մը ունենալը ճամ-
բու վրայ այգի մը ունենալու կը նմանի . . .
անցնողին աչքը վրան կը մնայ :

— Ընկերութեան մը մէջ լաւ խօսելու
համար նախ կշռելու է խօսելիք բոլոր խօս-
քերը և . . . 10, 20, 30, 40, 50 տրամ-
նոց բաժնիներու վերածելով գրպանը դը-
նելու է ըստ պատշաճի գործածելու համար :

— Տասներկու կիներէ միահամուռ ծեծ
ուտելը աւելի լաւ է . . . չ'սիրած մէկ կե-
րակուրդ ուտելէն :

— Երկու պերճամաստ և հմտալից քա-
րողի տեղ, կնոջ մը սիրուն, փայփայիչ մէկ
խօսքը կրնայ մարդս քովընտի փողոցներէն
չիտակ ճամբան հանել :

— Ուտելէդ վերջը միայն գոհացիր, ո-
րովհետեւ աշխարհ է, կրնայ ըլլալ որ կերածդ
առջեւէդ վերցնեն :

— Գիտէ՞ք հարկաւ թէ վարդերը Մայի-
սին կելլան և մեր Պր. բարեկամին օձիքնե-
րը վեր :

— Ամէն խնդրի մէջ ձեռքով ոտքով մի-
մանէք, որովհետեւ խնդիրը շատ անգամ
բարդ և խորունկ կըլլայ և դուք մէջը կը
մնաք :

— Նայէ որ անձնական համոզումներդ
միշտ տեղական ապրանք ըլլան, ճամբան
գտածդ՝ աղտոտ և դուրսէն եկածը՝ չեաս-
ուած կըլլայ ընդհանրապէս :

— Ծամբան միմակ կառքի տակ չմնա-
լով աչք բաց չըլլար ու է մէկը, . . . նա-
յելու է որ խօսքի տակ չմնաս, կամ լաւ է
կառքի տակ մնալ քան . . . խօսքի :

— Սիրուն ես, խելացի ես ըսողին ապ-
տակ մը դարկ, որովհետեւ քեզի առեւտրա-
կան հրապարակ կարծելով շահագործել կուզէ :

— Լաւ է անագան քան երբեք, կամ
անագը երկաթէն լաւ է :

— Ոչ միայն հացիւ կեցցէ մարդ . . .
(Այս խօսքը անպատճառ փորը կուշտ մէկէ
մը ըսուած է) :

— Եղիցի ձեր բանն, այսն՝ այո, և ոչն՝ ոչ
ըսուած է, գործադրուելու համար այն ա-
տեն միայն, . . . երբ քու շահերդ չեն վը-
նասուիր :

— Բարի արարէք ատելեաց ձերոյ . . .
եթէ կին են :

— Եթէ ընկերդ չապիկ չունի, հանէ
քուկինդ, հագցուր անոր և դուն մերկ
պտըտէ :

[ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ]

— Հայիւ եղած է որ ամբողջ աշխարհիս
վրայ 82,578 մարդ կայ որ իրեն բան գործ
ըրած է գետերուն եզիրքները նստիլ և . . .
ճանճ որալ :

— Լոնտոնի մէջ կառք մը չինուած է, որ
ժամը 5 վայրկեան արագութեամբ կերթայ :

— Անցեալ ամսուն մէջ Բարիդէն Նիւ-եօքը,
1,215,559 թռչուններ թռած են և փոխա-
դարձաբար :

— Չափուած է որ եթէ մարդուս խել-
քին մէջ եղած բոլոր մտածումները իրակա-
նային, այս աշխարհքիս պէս 55506550 աշ-
խարհք պէտք պիտի ըլլար, զանոնք պարու-
նակելու համար :

— Չինաստանի մայրաքաղաքը Բեքին է :

— Անցեալ չաբթու կին մը յղի մնացած
է Վիլնյայի մէջ և ո՛վ հրաշք (թէ և հրաշ-
քին դարը անցած է) ինը ամիս վերջը այդ
քաղքին բնակիչներուն վրայ հատ մը ևս ա-
ւելցած է :

— Ստոյդ աղբիւրէ քաղուած տեղեկու-
թեան մը համաձայն, Ռուս և ձաբոն կը
պատերազմին Մ. Արեւելքի մէջ :

— Մ. Ֆիլիփ անուն գիտուն մը, 8 տարի
2 ամիս, երեք չաբաթ և 15 օր զիջեր ցե-
րեկ աշխատելով, վերջապէս յաջողած է
դանել իր կորսնցուցած . . . ծխամորճը :

— Հայիւ եղած է որ, արեւին երկրէս
ուռնեցած հեռաւորութեան մէկ ու կէս ան-
գամէն աւելի հեռաւորութիւն ունի Մորկա-
նը . . . ինձ է :

— Իսկ տարբեր վիճակագրութեան մը
նայելով, ի.Ֆ այս խօսքերուս ականջ դնող
և կարդացողներուն թիւը մինչև հիմայ հա-
սած է 82,546 ի :

Բ. ԼՈՒՈՒՅԻՆԵԱՆ

ՄԱՏԱՄԵՆ ՈՒ ՄԱՐԻԱՄԸ

Ամէն անգամ որ չարախական պարտքս վճարելու համար դրիչը ձեռքս կառնեմ, կ'ուզեմ կը փափաքեմ որ կ'ի՛ն բառը չի գործածեմ և կամ կ'նոջ հետ գործ չ'ունենամ, բայց սատանան՝ որ կ'նոջ ներկայացուցիչն է, անոր քրքրեմը՝ միշտ մտքիս հորիզոնին վերայ կը բերէ զայն, կը կեցնէ ու ես . . . չեմ դիմանար:

X

Լիւրս ըսուած բանը կ'իներուն տրուած է կարծես և անոնց համար միայն հնարուած: Ամէն տեղ և ամէն բանի մէջ, կ'իներն են որոնք ցուցադրութիւնը կը սիրեն, կուզեն որ ամէն մարդ իր ուշադրութիւնը իրենց վրայ դարձնէ, և ահա անոր համար է որ չիք հագուած, և կատարեալ թուայեթով կ'են մը երբ դէմք ելլայ, և անոր ոտքէն մինչև գլխարկին փետուրը զննելու քննելու ելլան, պէտք է դնես այնքան ատեն՝ որչափ չպիտի դնէիր Էօթէն-Սիւի Թափառական Հրեան կարդալու համար:

Ինչպէս ըսինք՝ կ'իները լիւքսը չափազանց կը սիրեն, մանաւանդ հրամայելը:

Մեր մէջ ձեռքը բերնին հասնող ընտանիքներ, մէկ, երկու, երեք, աստիճանին համեմատ սպասուհիներ կը պահեն, լոկ հրամայելու համար: Մարիամ . . . կը կանչեն այնպիսի շեշտով մը, որ կարծես իրենք են ստեղծեր այդ սպասուհին, մանաւանդ մարդու մէջ, հիւրերու դիմաց:

Հաւատացէք, իմ մասիս, եթէ երբեք հոգեփոխութեան հաւատամ, և համոզուիմ թէ՛ մեռնելէս վերջ նորէն պիտի ծնիմ, կը նախընտրեմ վայրի կենդանի մը ծնիլ քան եւոյնացի Մարիամ մը, մատամբն քմահաճոյքներուն նշաւակ:

Հիմա պիտի տեսնէք թէ՛ մատամբն ինչպէս կը գործածէ Մարիամը:

Սա ալ չի մոռնամ ըսելու որ, գեղեցկութիւնը մեծ դեր կը խաղայ այս գործին մէջ: Վա՛յ ան սպասուհիին՝ սրուն բնութիւնը զլացած չէ իր գեղեցկութիւնը, ալ չարչարանքը, չափ ու սահման չ'ունենար, մինչև

որ նոյն այդ գեղջկուհին պոխնան չալկած գիշերով կծիկը դնէ, իր առնելիք երկուք ու կէս ամսականն ալ հեյալ ընելով Մատամբն:

X

Զորաբարէլ աղան կը ճանչնա՞ք, չեմ յուսար: Ինքնագնութեամբ յառաջ եկած մարդուկ մը, իրեն հայրն, ինչպէս կ'ըսեն ժողովրդական բարբառով, ամուսնացած և տէր ճատալող կնկան մը, ֆիզիքականով գեղեցիկ, մտքով թռուցիկ, և գաղափարով ուռուցիկ:

Տարի մը հազիւ կայ որ մատամբ քեքնէին տակէն ազատած է, չնորհիւ ամուսնոյն որ ամսական եօթը մէծիտի Մարիամ մը բերած է իբր սպասուհի, և աս ալ ոչ թէ Զորաբարէլ աղային քսակին առատութենէն, այլ մատամբն տրոտրոտին հետեւանօք:

— Մարիամ՝ . . .

— Հրամայէ՛ մատամբ:

— Ամուսն քանի՞ն է այսօր . . .

— Զիմ գիննայ ուր ըսիմ . . .

— Պէ՛ ճանրմ կնիկը ամուսն քանին ըլլալը ինչ գիտնայ, ինչե՛ր կը հարցունես կոր . . .

— Ամա՛ն . . . պառտախ մը ջուր բեր պիտի ըսէի . . .

— Իշտէ չիչէն դրած է մատամբ, չելլա՛ս ձեռքովդ լեցունես տէ խմես . . .

— Տէր ողորմեա՛յ . . . պէսլէմէ ինչո՛ւ պոներ եմ . . .

— Աղէկ ամա, երբոր քաշաներդ կապել տալու համար ալ կանչելու ըլլաս նէ, կնիկ կը սուֆան աւելնու վախիթ չունենար . . .

— Բեզի բան մը ըսեմ, Զորաբարէլ աղա, դուն պաշխալաչմիշ եղեր ես . . . զաթը ֆառզին եմ ամա՛, վրադ չէի դնել կոր . . .

— Խե՛ր ըլլայ, կէնէ ինչ շէյթան թիւթի մտաւ ներսիդիդ . . .

— Ինչ պիտի ըլլայ, տիւղճէ բան մը ունիս աղջկանը հետ . . .

— Մեղա՛յ Աստուծոյ . . . կնիկ խելքիդ եկաւ . . .

— Խելքիս ալ եկաւ միտքիս ալ . . . զէ-

րէ ինչ քի գուրցելու ըլլամ նէ, խառթալ խուշիւ պէս թեւերդ կը բանաս, վրան կը ծածկես կոր . . .

— Էյ տողառու, տահա նէլէր . . . դուն ինչ ունիս քի առ զաւալը աղջկանը նայիմ . . .

— Բախլան ալ անանկ է, դուրսէն եկածը իշտահլը կուտուի ամա, եսլին ելլալուն պէս երեսը նայող չըլլար . . .

— Վո՛ւյ . . . առ ի՞նչ ճիշէր կոտորուակ լախուտներ կրնես կոր . . . աչկա ելլայ, կէշ կըլլամ մըսեր . . .

— Դուն կը տեսնաս, պօխճան ծառքը տամ տէ ճամբելու ըլլամ նէ . . .

— Պէ կնիկ խելքդ տուն պեր, ամօթ է մէյ մը քեզի նայէ, մէյ մըն ալ անոր նայէ, ետքէն ինծի նայէ, եսխըջըն կ'առնէ՞ կոր ըսածդ . . .

— Երիկմարդ չէ՞ք մի, միտէ չունիք վէս-տէլամ . . .

— Էյ բէք աղէկ . . . առ ո՞րկէ առաջ եկաւ աս պանը, ի՞նչ ուշադրանքդ մէկ հալլալդ կնիքդ պիւքմիւն ըրաւ . . .

— Սուս սուս, պերանս պանալ մի տար, տահա աստարը չիւրէ կընեմ կոր տէ կը պուրցեմ կոր, ալթըն հասկցիր քի, ծառքով պոռնելու ըլլամ նէ ի՞նչ կըլլայ հալեր-նիդ . . .

— Ծանրմ ատոր ինչի՞ն . . . դուն էրի-կըդ աստար ծակ ա՛չք գիտես կոր . . .

— Երիկմարդ խամլին կիտեմ ես, մի սրբանար, աս պանը երէկ իրինկուն պիտի ըսէի ամա, նէ իսէ կուլ տուի, կնիկը քէօ-միւրիւկէն քէօմիւր հանած վախտը ի՞նչ բան ունիս քովը . . .

— Պէ կէօգիւմ ինծի կանչեց քի քէօ-միւրը հատեր է տէյի, ես ալ հոն գտնուե-ցայ . . .

— Ես քեզի կը հասկցունեմ, հէլէ մէյ մընալ ֆառլին երթամ . . .

Այսպէսով առաջին վարագոյրը կը դոցուի

×

Շաբաթ օր մը մատամը բաղնիք երթա-լու կըլլայ, դիպուածաւ Զորաբարէլ աղան ալ չուկան սանձի ընկուն հանուխ տուն կը գտնայ: Դուրը զարնկուն երբ կը տեսնէ թէ սպասուէին սոթթաւ-րամ պըն պընի դէմը կեկայ:

— Մարիամ . . . մատամը ո՞ւր է, վի-զիթայի գնաց . . .

— Չէ աղաս, բաղնիքն է . . .

— Ե՛մ . . . հայտէ սա կէճէլիկս բեր նայիմ . . . կըսէ ու կսկսի հանուիլ, նոյն ատեն Մարիամ գիշերնոցը բռնած դէմը կը կենայ:

— Գուշում աղաս, քեզի իրիճայ մը ու-նիմ ըմմա . . .

— Ըսէ նայիմ, ի՞նչ է ան . . .

— Դիտես որ ես կէնճ եմ, տըհա քսանը չորսիս մէջն եմ . . .

— Էյ . . .

— Երկու տարի կընի, էրիկս մեռած է . . .

— Էյ . . .

— Ես ասանկ կ'ընձ ու կանանչ տարիքիս ընտարէք ինչ է չեմ գիտեր, չատ պղտիկ խայզ ըրի էրիկս . . .

— Էօ՞ֆ . . . վրաս լեօպէթ կուգայ կոր . . .

— Հէլէ կեցիր աղաս ուր պատմեմ, ըսելով՝ գունաւոր թեւերը կը ծալէ դէմը կը կենայ, մինչ Զորաբարէլ աղան անկիւնը քաշուած սիկառը կը միացընէր, միացընե-լով նաե . . . սիրտը:

— Հայտէ Մարիամ, հիմա մատամդ կու-գայ, գործդ լմնցուր տէ ետքը կը պատմես . . .

— Ախ աղաս տէքոս քեզի հետ է, մա-տամ ի՞նչ ընիմ, դուն կրնաս տէքոս տէք-ման ըլլալ . . .

— Էօ՞ֆ . . . ճանրմ հիմա վազ անցիր . . . Մարիամ ծունգի վրայ ոտքերուն կը փաթթուի:

— Աղաչանք մը ունիմ պիտի կատարես . . .

— Տէ՛ր ողորմես . . . էլի քա՛ . . . խելքիդ եկաւ . . . հիմա մատամը գտնի՛մ . . .

— Մատամը ի՞նչ պիտի ըսէ, ես իմ տէր-տըս կուլամ . . .

— Չօդ չէ՛յ . . . կնիկ ելիր կայնէ, կը-լովս պէլան պիտի խօթես . . .

— Իրիճաս սա է քի, աղբարս մաղա-գայիդ մէջը գործի մը դնես, ասանկ հայ-պէհաբը չը պտըտի . . .

— Էօ՞ֆ . . . առաջուրնէ տո խալթը չուտես քա . . .

Ու Մարիամ դեռ ոտքի չեկած, ի՞նչպէս կըլլայ, մատամը սրտուէլին դուռնէն ներս մտած ըլլալով՝ ուղղակի վեր կ'եկայ եւ կը մանայ այն սենեակը, ուր Զորաբարէլ աղա

անկիւնը նստած, Մարիամը ոտքերուն տակ ծնրադիր կը խօսակցին:

— Ե՛հ, Ե՛հ, Ե՛հ, Ե՛հ, Ե՛հ:

Իրեն բաղնիք երթալէն օգտուելով, Զորաբաբէլ աղային չուկայէն կանուխ դարձը, տանը մինակութիւնը, Մարիամին գործը ձգած անոր սենեակը մտնել ու ծունգի վերայ մօտը գտնուիլը... վարկենական ցնցում մը յառաջ կը բերեն մատամին ջղային դրութեան վրայ:

— Ե՛հ... ասանկ հէ՛, Զորաբաբէլ աղա խուշիկս...

— Եկար մատամս, անուշներ ըլլայ, բարով աղտոտիս...

Մարիամ, անմիջապէս սենեակէն դուրս կ'ելլայ յանկարծակիի եկած:

— Զէհիրներ ըլլար տէ՛ դուրս չելլայի, նայէ հախ չունիմ եղեր չիւբէլէնմիջ ըլլալու, աստար տարուան էրիկս ես օր մը կանուխ տուն գալդ չեմ տեսեր... քանի քի աս պէտէմէն բռնեի ենք նէ դպրոցի աշակերտի պէս աշկղ տունն է...

— Պէ՛ պապամ կայնէ քի ըսեմ, սանճիւս զօռէն անճախ տուն նետուեցայ, աս կընիկն ալ եկեր է հալվար կ'ըլլայ կոր քի...

— Սուս, հիմա իշտար ծան ունիմ նէ կը պոռամ, պըլըններուդ պոյան նայէ տէ, ետքէն ատանկ ճամբաներ պոնէ, կիտի սէնի կիտի... Իմ ո՛ւր տեղս խուսուրլու է քի աշկղ դուրսը կըլլայ կոր հէ՛...

— Աստուած չընէ մատամս, պախճային կիւլը պէլքի խուսուր մը ունի, Փախաթ դո՛ւն... Աստուած չընէ...

— Հիմա ի՛նչ ընեմ, ան ըսէ, տաներէ՛ցը կանչեմ, մօրս տո՛ւնը երթամ, չէնէ մի սօլուխս Պատրիարքարան առնեմ... ո՛րը ընեմ... ճուղապ տուր...

— Պէ՛ կէօզիւմ կայնէ որ պատմեմ, կընիկը անպար մը ունի եղեր տէ...

— Սո՛ւս... արունս մի տառցնէր, մասալ մտիկ ընելու չօճուխ չէ դիմացինդ, աչքովս տեսայ, ալթըի ըսելիք չունիմ ես, վախ վախ վախ, վախ իմ կէնճ արեւուն քի քու ծառքդ ինկեր եմ... վախ... հազար վախ...

— Պէ՛ կնի՛կ, խելքդ տուն պեր, կնիկը եալվարի համար ոտքերս ինկաւ սըտեղը, աղբօրը համար, ի՛նչ կէշ միտքի կերթաս

կոր... մէյ մը ինձի նայէ քի անանկ պէս... լէմէյի էյվալլահ ընող մարդ եմ... ես էկէր ան միտքերը ունենայի նէ... իշտէ անանկ...

— Սառեարի խասապին կնկանը համար ալ ատանկ ըսիր ամա՛...

— Էյ ի՛նչ եղաւ քի, ինչս պոնեցիր...

— Ես ան աս չիտեմ, հիմա թեւէն պըռնեմ դուրս պիտի հանեմ տունէն, ըսելով անմիջապէս Մարիամը կը կանչէ:

— Ինձի նայէ Մարիամ խսմէթդ ասխըտար է եղեր, պօխճադ կապելէտ ետքը մէյ մը բեր նայիմ տէ գնայ բանդ...

— Վո՛ւյ... վայ մեղքիս, մեկէր յանցանքս ի՛նչ էր...

— Եանցանքդ մանցանքդ չիտեմ, հիմա տունէս դուրս պիտի ելլաս...

— Աղան ալ խայթիլ է օր ես ելլամ երթամ...

— Նայէ նայէ, սըտը լախըտըն նայէ, աղան չի խառնուիր, ես կըսեմ կոր քի հիմա դուրս ելլաս, աղան պերնիդ համ տըլաւ ալլահալէմ...

— Աղաս օր գրինայ իսէ իս չի ճամբեր...

— Բեղի կըսեմ կոր քի հիմա դուռնէն դուրս ելլաս տէյի, կը հասկնամ լախըտըն...

Ու խեղճ Մարիամը ասանկով կը ճամբուի, ճատալող մատամին կասկածներուն զոհուելով, և արցունքը աչքին, պօխճան թեւն առած կը մեկնի տունէն, անէծքնի տեղալով մատամին զլխուն, որ պատճառ եղած էր իր ճամբուելուն յանիրաւի:

×

Նոյն չաբթուան կիրակի առաւօտուն, պիւնը ոլոր ոլոր, աչքերը վառլտըկող, բարձրահասակ և բերտահիթուաթ բրուալով մէկը կը զարնէ դուռը, ու տիկինը վերէն տեսնելով դուռը կը բանայ:

— Հա՛ եկա՛ր վարպետ, ներս եկոր նայիմ...

— Ո՞վ է ատ միւսիւն, մատամ...

— Ո՞վ պիտի ըլլայ իշտէ, աչի չապըս պըրեցինք մի, եկեր է մարդը:

— Ասիկա դիտնալս եանլը տեղ է եկեր, աս հէրիֆը թիւճճարի եազըճի կըլմանի կոր, հի՛ աչճիի սուռաթ չունի...

— Տէր ողորմեա, շնորհքով աչճիէ իշտէ...

խոհարարը ներս կը մտնայ և ձեռքերը կուրծքին վրայ ծալած հրամանի կսպասէ :

— Դու ի՞նչ փութեղացի ես վարպետ . . .

— Հոս տեղէն եմ մատամ , բուն Բերա-
ցի եմ . . .

— Կերակուրդ նասը՞ է . . .

— Այլա՞նք ունե՞ս , ալաթ ուրքա , ամէն
կերպով կրնամ գոհացնել ձեզ մատամ . . .

Զորաբարէլ աղա կնոջը ականջն ի վար . . .

— Դպրոցէն հայերենի դասատուն փոխել
կուզէին կոր , չիտակ հոն զրկէ . . .

— Պիտի կրնամ մեզի գոհ ձգել վար-
պետ , անուշդ ի՞նչ է . . .

— Քառու , ես չաբաթ մը կենամ , այն
ատեն ես երթալ ուղեմ , դուք չպիտի ձե-
գէք , վստահ եմ խօսքիս , արդէն ճաշակա-
ւոր և համեղ կերակուրներս պիտի հաստա-
տեն ըսածներս . . .

— Է՛հ , շատ աղէկ , վար ինչիր տէ տշ-
խատիլ պաշտէ նայինք , ամսականդ որ-
չա՞փ է . . .

— Երեք ոսկի մատամ , և տարին չորս
քօսթիւմ . . .

— Նայինք քանի մը օր աշխատէ տէ ,
կրո՞ւ մատամը , մինչ միւսիւ խոհարարը Քառու
դուրս կելլայ սենեակէն :

Զորաբարէլ աղա , տեղէն ցատկելով ,
անձեռոց մը մէջքին կը կապէ ու մատամին
դէմը անցնելով ,

— Յերեկին ի՞նչ եկեմ մատամ . . .

— Աման դուն ալ , օյինճախի՞ կ'ելլա
կոր . . .

— Քա նասը օյինճախ , ես ի՞նչ եմ ե-
ղեր քի ասոր երեք ոսկի , չորս խաթ լաթ
պիտի տամ . . . ուր ենք , չըմէնտըֆէ՞ս
զարկաւ ի՞նչ եղաւ . . .

— Պոչ լախըռը , չէ , բառալստ պէտէմէ
բունեմ քի խօշափիտ գայ , հա՞ , անանկ
կ'ուզէիր . . .

— Ան տիչին է նէ , աս ալ էրքէքնէ . . .
Կեցիր նայինք , ըսելով խեղճ մարդը իր մա-
տամին ձեռքին մէջ խաղալիքի պէս , իր
գործին կերթայ , բայց նոյն օրը տարի կը
թուի իրեն և իրիկուն չ'ըլլար , խելքը տու-
նը , միշտ վարպետին քաջող աչքերը , ուր-
բուն պիտիորը , մաքուր հայերէնը , աչքին
առջև կուգան , և ժամը իննին խանութը
գոցելով շուկայ տունը կանգնէ , ճիշդ կնոջը

ըրածին պէս , պարտէզին դուռնէն ներս
մտնելով ոտքին մատներուն վրայ թեթեւ մը
կոխելով սանդուխներէն վեր կնոջը սենեա-
կին դրան կը մօտենայ ու բանալիին ծակէն
կսկսի դիտել :

Ներսը խոհարարը ծունգի վրայ , մատա-
մին սկաւորին կապերը կը կապէր նոյն
ատեն , և մէջքնին սա խօսակցութիւնը
կ'անցնէր :

— Կը շնորհաւորեմ մատամ , շատ մինեօն
ոտքեր ունիք , ասկէ առաջուան բանած
տեղս տիկին մը կար Կէ թիւ կօշիկ կը հագ-
նէր . . .

— Աման վարպետ տա՛նա նէլեր . . . ատ-
տար հաւնեցա՞ր . . .

— Եթէ չի հաւնի , անճաշակ մէկը կըլ-
լամ մատամ , ի՞նչ կ'էք . . .

— Ինծի նայէ Քառու , առջի մատամդ
ինչ աղուո՞ր էր . . .

— Հողիս , ի՞նչ դիտամ , անիկայ նի-
հար էր , չոր ոսկոր , բայց հրամանքնիդ . . .

Այս անգամ խոհարար Քառու աչքերը
վեր կ'առնէ , և որպէս զի խօսակցութիւնը
իր անուշութիւնը չի կորսնցնէ , կապերը միշտ
կը քակէ ու կը կապէ շարունակաբար :

— Իմ աչքերուս պէս ասանկ սե սե տէ
պոչո՞վ . . .

— Պոչ ունենալը չունենալը չեմ գիտեր ,
բայց աչքերը աղուոր էին . . .

— Հայտէ գնայ բանդ ծօ՞ , հիշ կուսաօ
չունիս եղեր , ինծի պէս քօռո՞ւ կը դնէր . . .

— Պաղի պաղի իս կը կանչէր , մէջքն
ի վար խայթանիս մը սեղմել կուտար ամա ,
չեմ գիտէր քօռո՞ւ կըսեն անոր . . .

— Ըսել է քի դուն մատամիդ օտան
կ'ելլայիր հա՞ . . .

— Հապա՞ . . . ինչու չէ , աղան դուրս
չուկայ երթալուն պէս ես վեր կ'ելլայի , մա-
տամս բռնեմք մէկուսը ունէր , մէկտեղ
ծառքէ բռնեմք կը խաղայինք . . .

— Ե՛հ , անանկ է նէ վաղը գործերդ
ըմնցունես նէ վեր եկուր տէ խաղանք , ես
ալ մեռաք ունիմ աս օյինին . . .

— Երեք հոգի խաղանք նէ տա՛նա հա-
մով չըլլար մատամ . . . ըսելով Զորաբար-
էլ աղա ներս կը մտնէ սենեակէն , ու Քառուն
և մատամը կ'արձանանան . . .

— Աս ի՞նչ է , ի՞նչու եկար Զորաբարէլ
աղա . . .

— Ան առաւելն պիտի տուի սանձին կը պոնէ կոր տէ, անոր համար եկայ . . . կուզես նէ երթամ . . . անպա . . . պէտ-հիւզիւր ըրի մատամը . . .

— Տէր ողորմեայ, ատ ինչ խօսք է Զորաբարէլ աղա, կը վալէ . . .

— Հախ ունիս իրաւ քի, ուշախը իլէն պէսլէմէն թուղթ խաղալու ըլլան նէ, աղաին օւթալս ըլլալը չի վալեր ամա . . . աչճին իլէն մատամը օյնի ելլան նէ . . . քիմ վէրտին մութլախ աղաին վրայ պէտք է քի մնայ . . .

— Տահա նէլէր, ո՞վ թուղթ պիտի խաղայ, ինչի կըսես կոր Զորաբարէլ աղա, տաքութիւն չունենաս, նայիմ հէլէ ճակասըդ . . .

— Ճակատս բէք չարուն նայելու ելար տէ փնտռածներդ ծար տուած չեն տահա, աղէկ հասայ չենէ . . .

— Նայէ ինչ եղաւ, քօսէս դերեր էյի, երկու խաթ ծոխ տէ սկառքինիս կապերը չի կրցի կապելու Քառօն կանչեցի քի կապէ տէյի . . . տահա բան կայ նէ ըսէ, խել-քիդ եկաւ քուկին . . .

— Աղէկ ամա, նասը մարդուն կուստօ-ին հաւնեցամ, քեզի իլէն առջի մատամը նասը գտաւ, վախնամ ան քենէ աղուոր է եղեր տէ կիւճէնմիջ եղար քիչ մը . . .

Մատամը կռահելով թէ Զորաբարէլ աղա չատոնց եկած ու դռանը դուրսէն լսած էր խօսակցութիւնը, կաս կապուտ կըլլայ առանց բառ մը արտասանելու կարողութիւն գգալու իր մէջը :

— Եւ մատամըս ասանկ հէ, խեղճ Մար-իամը արցունքոտ աչքերով ծունկի վրայ, ոտքերուս փաթթուած, աղքօրը գործ մը գտնամ տէյի իրիճա ընելը տեսնալով, կէօյա քի, զավալլըին հետ հիօ պիյօ ունիմ տէյի վրաս իֆթիրա նետեցի, կնկանը արունը մտար, թեւէն բռնեցի դուրս հանեցի, զարար չունի, պէսլէմէ մընէ նիհայէթը, թող երթայ խամէթը պալսա տեղ մը փնտռէ, ինծի մինակ խղճիս ցաւ մը տուաւ, ՖԱ-իԱթ . . . աս իրիկուան եկող կէնճ թըֆըլ աչճին, քի . . . աչճի ըսելու համար հա-ղար շահիտ կուզէ, իմ բացակայութենէս օգտուելով՝ քու թուալէթիդ օտան կանչել, կէս տէքօլթէ հիյէթովդ անոր սկառքին է

ինչ խառախատաւ, ատոր կապերը կապել տալդ, հէմ ալ հետը եանշախ եանշախ ճիւ-վէներ ընելդ, ինքզինքդ մարդուն հաւնե-ցունես տէյի, ալ աչքերդ մի, մաղերդ մի, նազերդ մի, հաղերդ մի, խաղերդ մի, ո՞րը ըսեմ, հէրիֆին անկաճին տակը վըռ վըռ խօրաթեղներդ, և մինչև անգամ վաղուան օրը դէմդ առնել տէ բռէֆա խաղալ ուղիդ իմացող, աչքովը տեսնող սա ես, որ էրիկդ գտնուեր եմ, ինչ ընել պէտք ունիմ անա-պա հէ . . . ճուղապ տո՛ւր . . .

Մատամին երեսի կարմիրները խալի պէս կը մթագնին :

— Դուն քու կնիկի պօշ չիւքէներովդ խեղճ կնկանը արունը մտար, թեւէն բռ-նեցի դուրս հանեցի, ես իմ էրիկմարդու առաւելութիւնովս ու հրամանաւն Աստուծոյ էրիկդ գտնուելու չար բաղդովս ինչ կու-ղես որ ընեմ . . . ըսէ, ինչ ճամբայ բռ-նեմ, աչքովս տեսած և անկաճովս լսած ըլլալովս մէկտեղ . . .


— Ինչ ըսեմ . . . եազլըն երթանք նէ Քառօն ճամբայ կուտանք կերթայ, անկէ կտքը ես կ'եփեմ ես կ'ընեմ . . .

— Անանկ էնէ յիւշեւ եազլընին օրն ալ ես կ'եփեմ ես կ'ըլլամ՝ ըսելով, վար կ'իջնայ և Քառօն կը ճամբէ առօք փառօք :

×

Մեր հայ-լայֆ դասակարգին գոց վարա-գործներու ետին ինչ թատերական ներկա-յացումներ կանցնին, որոնք մութին մէջ կը մնան, և սակայն ատոնց հանդիսատեսը կամ լսողացը կըլլայ միայն՝

ԼԻԼԱ



ԺԱՄԱՆԱԿ

Երուսաղէմի վանքին նախկին Երուսաղէմի Գեր. Տ. Ղեւոնդ Վրդ. Մագսուտ-եան, Զորեքչաթի օր մայրաքաղաքս հա-սաւ և իջաւ Երուսաղէմատուն, ուր հիւր կը մնայ Երուսաղէմի Կ. Պոլսոյ Պատր. Փոխա-նորդ Գեր. Տ. Դէորդ Սրէցեան Սրբազանի :

Եկեղեցական և աշխարհական ծանօթ անձնաւորութիւններ բարի գալուստեան այցե-լութիւն կուտան Ն. Գերապատուութեան, որ պատկառելի և համակրելի եկեղեցական մըն է, բաց ճակատով և պայծառ դէմքով :

ՈՂՈՐՄԵԼԻ ԹՂԹԱԿԻՑ ՄԸ

« Սուրհանդակ » ի մէջ , Իզմիրցի Միհրան Մելիքեան անունով արարած մը , ասկէ առաջ թղթակցութիւն մը ստորագրած էր , որով կը դատաւիտէր հանրակնոյ մը թաղումը փառաւոր հանդէսով կատարող քահանաները , որոնք չէին խղճահարած այդ գերագոյն շահատակութիւնը ! Ի դժբաղդ ներու : Մեր ընթերցողները ինչպէս կը յիշեն , Հանրագիտակի նախորդ թիւերէն միոյն մէջ , հանրակիներու քաղուած խորագրով յօդուածով մը , ի վեր հանած էինք այս թղթակցութեան անիմաստ ոգին , և թղթակցին մոլեւանդ զգացումները , որոնք խոստով կը համեմատէին Հայ եկեղեցիին դարաւոր ազատամտութեան հետ :

Յիշեալ ողորմելի թղթակիցը , իբր թէ պատասխան մը տալու համար մեր գրածին , երբ նոյն այդ լրագրին 1906 թիւ թերթին մէջ , կէս սլանակ բան մը տեսնուեց , և այսպէս , անգամ մըն ալ երեւան բերելով իր մտքին անօրինակ ողորմելիութիւնը :

Առանց հիւլէի չափ կարեւորութիւն տալու իր անուանարկի տողերուն , որոնք աւելի պիտի պաշտօնէին իրեն , նորէն կ'ըսենք թէ Իզմիրի Բանաստեղծներ Երբեք Եւ Բանաստեղծութիւն մը րո՞ւմ չեն համարուի հանրակնոյ մը քաղումը փառաւոր հանդէսով կատարած ըլլալուն համար եւ դարձեալ միամիտ մըն է այն ու կը կարծէ թէ Հայ եկեղեցին յետ մահու վրէժ մը պիտի լուծէ հանրակնոյ մը քաղումը անփառունակ կատարելով :

Զարմանալի է որ , Իզմիրի պէս քաղաքակրթութեամբ քաղաքի մը մէջ , տակաւին կը գտնուին այդ թղթակցին պէս անձկամիտ մարդեր որոնք , հակառակ քանակորդ դարու մէջ ապրուած ըլլալուն , միջնադարեան գաղափարներ կը սնուցանեն :

Զ Ե Կ Ո Յ Ց

Ի վերջէ-ձէնէսէի համար թերթիս գործակալութիւնը յանձնուած է ՄԵՄ. ԳԱՅՐԻԻԷԼ ԷՅԹ. ԹԱԳԻՈՐԵԱՆԻ , որուն պէտք է չիմել բաժանորդագրութեան համար :

ԶՈՒԱՐԹ ԺԱՄԵՐ

Աւելի չի' մեռնիր , կը գրէր այս շաբաթու սիրելի բարեկամս (ականջը խօսի կալուածին) Յակոբ Էֆէնտի Տէր-Յակոբեան՝ իբրև պատասխան ծանօթ բարեւեր Թալչանճեան Էֆէնտիին , որ Ամերիկայէն նամակ մը ղըրկելով մեր հնագոյն թերթերէն մէկուն , դրամական մեծ ու պզտիկ , աստիճանաբար , պարգևներ տալ կը խօստանար ալքոլամոլութեան դէմ գեղեցիկ յօդուածներ գրողներուն : Եթէ ես ըլլայի այդ երանելի պարգևատու , հաւատացէք որ խօստացուած նուէրին է'ն մեծկակը բաժին կը հանէի մեր թաղեցի զինեպան՝ Միհրան աղային , որ եթէ ոչ յօդուածագրութիւնով , ինչպէս կը յանձնարարուէր , գոնէ գործնական կերպով ցոյց տուաւ ալքոլամոլութեան դէմ ձեռք առնուելիք միջոցներուն է'ն գեղեցիկը , հետեւեալ պարագաներուն մէջ : Գիշերուան ճի'շդ այն ժամուն երբ գինեւան մանչուկները (դուք ըսէք կառնօնները) կը պատրաստուէին կրկնել սովորական բանաձեւը ... հայտէ' , վաքի՛ղ , երկու դեռատի պարոններ , ճեղքելով զգայազիրի գինովներու սարսուղ գեցիկ ամբոխը , ուղղակի տեղիեանք կը շտկուին և մէյ մէկ թեք օղի կ'ապսպրեն : Տարիքոտ ու փորձ գինեպանը , շուարած այս անակնկալէն , ու մանաւանդ անդրադառնալով պահ մը հին , այն բարի օրերուն , երբ այս կարգի պարոններ՝ չէ թէ ասանկ գինեպաններէ ներս մտնել , հապա , անոնց դռներուն առջեւէն անցնելն անգամ ամօթ կը սեպէին , չափազանց կը յուզուի և վայրկեան մը մոռնալով այդ սնաւէր ալքոլին իր ապրուստի միջոցն ըլլալը , ճշմարիտ հօր մը պէս դաս մը տալ կուզէ մեր պլան-պէք միւսիւններուն , և ապսպրուած երկու գաւաթներուն հետ պնակ մըն ալ մուայիկայի դնելով ,

— Շիտակը տղա՛քս , կ'ըսէ , փնտռեցի , փնտռեցի բայց ձեզի համար ասկից յարմար մեզի մը չի գտայ :

ԶԱՒԱՆ ՄՈՅՐԵԱՆ



ԲԱՌԳԻՐՔՍ

ԴՐԱՄՈՑԻՏ — Աղ, սալցա կամ garniture:
ԿԻՆ — Սպասեցե՛ք սիրելի ընթերցողներ-
 քս ուր ըսեմ, բայց կը ներե՛ք « կին մը եր-
 բեք չի սպասեր » :

ԷՐԻԿ-ՄԱՐԻ — Շոգեմաւ մըն է որուն
 անկները դրամը պէ՛ք է ըլլայ նաւարկելու
 համար կին-ովկիանոսին վրայ :

ՍԻՐՏ — Ֆիզիկականը à vous docteur !
 Իսկ բարոյապէս սիրքը *phon* է կ'ըսեն եւ
 անոր ազդեցութեան բռնուող ամենեւնի սրա-
 թես աչքերով բիրտ մարդն իսկ կուրօրէն կը
 նետուի Պենելոպայ աւազանը . . . Բժը-
 կուելու համար :

ՎԱՐԺՈՒՀԻ — Հոմանիւ բառ մը ժա-
 ջան մեղուին . մեղը պատասխելու համար
 չի յուլանաւ նոյն իսկ հեռաւոր գաւառներ
 գալիքելու ի ծաղկանց հոյ՛սի: Ասուն մեղու-
 ին տարբերութիւնը ան-ասունէն, առ է որ ա-
 ռաջնոյն փեթակը ապակիէ շինուած ըլլա-
 լուն դիտողներ անմիջապէս գիտակից են ներ-
 քին առիւտներէն :

ՎԱՐԺԱՊԵՏ — Idem :

ԼՈՒՍԻՆ — Ամառուան գիշերները բա-
 նասեղծները զուարթացնող այս մոլորակը
 ձմեռը կը մոլորեցնէ զանոնք :

ԱՂՋԻԿ — Ա՛խ ' ' ' չի՛ք :

ԱՄՈՒՍՆՈՒԹԻՒՆ — Քերականօրէն կ'ըս-
 ուի նաեւ trait-d'union :

ԱՂԻՐԻԿ-ԲՈՒԲԷՍ — Այս բաղադրեալ
 բառը այն յանկերգն է զոր նոր հարսը կը
 գործածէ իր ամուսնոյն հանդէպ, ճիշդ այն
 վարպէս *սէխ*ին նման որ կը շոյէ ձիուն գը-
 լուխը, սանձ դնելու համար անոր բերնին :

ԱՅԾ-ԵՂՋԻԻՐ — Չոր պտուղ մ'է *ֆէյի*
 պոլյնուզուն կամ «caronbe»-ը զոր Կաղանդին
 իրիկունը կուտեն, կան ալ որ ոչ Կաղան-
 դին եւ ոչ ալ մեծ պահիւն կուտուին . ասի-
 կայ ըլլալու է այն պտուղը զոր նախամայրը
 սասանային փորձուելէն ետքը նուիրեց իր
 ամուսնոյն :

ԿԵՍՈՒՐ — Պահապան հրեշտակ մ'է զոր
 կ'աւտեն սասանաները եւ խոյս տալ կուզեն
 անոր ներկայութեան, իրենց քայքայներ լի-
 վին գործադրելու արգիլուած ըլլալուն հա-
 մար :

Ս. ԽՈՐԷՆ

ԱԶԳԵՐՆԻԴ ԼՈՅՍ

ԳՈՐԾԻ ԳԱՆԻՔ ՆՈՐՈՒԹԻՒՆ ՄԸ

Հագուիլ, շփուիլ եւ աղամանդներով
 զարդարուիլ, ինչպէս նաեւ սան կա-
 րասիներ կոկել ամէն կերպով, առանց
 ֆաւկնիդ պարպելու

Ա. Յ. Լ.

ԱՊԱՌԻԿ

Մայր ես, աղջկանդ օժիտը կը մտածես՝ դիմէ՛.

Օրիորդ ես, շիք եւ աժան հագուիլ կուզես՝ դիմէ՛.

Երիտասարդ ես եւ շիքը կը սիրես՝ դիմէ՛.

Տարեց ես եւ ցուրտէն պատապարուիլ կուզես՝ դիմէ՛.

Տղաքներ ունիս որոնց պիտոյքը զանկը կը ճանեցնեն՝ դիմէ՛.

Ամուսնացու աղջիկ ունիս՝ ըրզակներու պէտք ունիս՝ դիմէ՛.

Եկածը Կաղանդ, է նուէրներ զնեւ կը փախաբիս՝ դիմէ՛...

Տարին քանի մը անգամ հովանոց գնելէն զգուած ես՝ դիմէ՛.

Ձեռքդ պարտապ մամբայ քայլել չէ՛ս սիրեր՝ դիմէ՛.

Կուզե՛ս տունդ կոկել ճաշարար կարասիներով՝ դիմէ՛.

Առաջնակարգ եւ տոկուն գուլպաներու պէտք ունիս՝ դիմէ՛.

Կուզես շիք, ճաշարար եւ լաւ տեսակ փողկապներ ու-

նենալ՝ վերջապէս կուզե՛ս ոտից ցլուխ հագուիլ, շքուիլ,

պնտուիլ

Դիմէ՛ միմիայն

“ՀԷՐՃԱՅԻ” ՎԱՃԱՌԱՏՈՒՆԸ

ՄԵԾ ՇՈՒԿԱՅ, ԴՈՒՅՈՒՄԸՆԼԱՐ ՓՈՂՈՅ ԹԻՐ 13

ուր պիտի գտնես ամէն տեսակ հագուստի,
 ճերմակեղէնի, ֆանթէզիի, աղամանդի,
 ժամացոյցներու, չղթաներու եւ ամէն տեսակ
 կարասիներու ճոխ մթերք մը :

ՎՃԱՐՄԱՆՑ ՊԱՅՄԱՆՆԵՐ

1. Ապառիկ գնողներու համար հարիւ-
 րին 20 կանխիկ եւ մնացեալ գումարին հա-
 րիւրին 5ը շաբաթական վճարմամբ .

2. Կանխիկ գնողներու համար հարիւրին
 5 զեղչ .

3. Կանխիկ ծախուած ապրանքներէն մի-
 միայն աղամանդեայ գոհարեղէնները երբ
 գործածուած բայց անփշա մնացած ըլլան,
 հարիւրին 10 զեղչով, իսկ ապառիկ ծախ-
 ւած եւ անփշա մնացած միմիայն աղաման-
 դեայ գոհարեղէններէն ալ հարիւրին 15
 զեղչով ետ կ'առնուին :

ՍՍ.ԿԱՐԿՈՒԹԻՒՆ ԶԿՍ.Ց

26—30

«ՀԱՆՐԱՊԵՏԱԿ»-ի ԹԵՐԹՈՆԸ 16

Հեղինակ՝ ԼՈՒԻ ՊՈՒՍԸՆԱՌ

Թարգմանեց՝ Յ. ՏԵՐ-ՅԱԿՈԲՆԱՆ

10,000 ՏԱՐԻ

ՍԱՌՆԱԿՈՅՏԻ ՄԸ ՄԷՁ

Լոյսի խաղերը կը շարունակուէին երկրիս վրայ, ընդհատ և կանոնաւոր ձեւով մը և սեւէն ճերմակ, ճերմակէն սեւի կը վերածուէին :

Մ. Սէնթեղ ուշադիր, դարձաւ Մեծ-ծերունի-պարոնին և ըսաւ .

— Ասիկա տեսակ մը տեսողական հետադիր է :

— Այո, բայց ոչ կարծուածին չափ պարզ : Հիմա վար պիտի իջնենք և կարելի եղածին չափ շուտ պիտի մօտենանք գետինն, այս փորձին մանրամասնութիւնները հասկնելու համար ձեզի :

Յանկարծ խումբը սահեցաւ վար : Ստուերը մեծցաւ արագ, անհամեմատ արագ մը, այնքան որ կ'իջնէին : Մ. Սէնթեղ և ընկերները գետինն ոտք դրին :

— Հսկայական բանակ մը կայ հոն, յարեց Մեծ-ծերունի-պարոնը, 450—500 հազար հոգինոց . . .

— Մաս-Չիններ, ընդմիջեց Մ. Սէնթեղ :

— Ոչ : Մաս-Չինները անարժան աշխատաւորներ են մեր գիտական և բարձագոյն աշխատութեանց համար : Այս ամէնքը որ կը տեսնէք թէ կը շարժին մտածումի պէս արագ, մեր նմաններն են, մեզի պէս ուղեղայիններ : . . . Բայց մօտեցէք նախածին և մի վախճաք թէ գործողութիւնը կը խանգարէք, փորձի դաշտին եղերքը կը գտնուինք :

Այս մտերմական հրաւերէն քաջալերուած Մ. Սէնթեղ դանդաղաքայլ մօտեցաւ և մօտէն դիտեց ճշմարտապէս հիացիկ տեսարանը : Իր առջև գետինը փռուած էր առնուաղն հարիւր քառակուսի մեթր տարածութեամբ կտաւ մը . մէկ կողմէն կտաւը հողին դամուած էր ցիցերով և միւս կողմը ձեռքն էր երկու մարդոց, որոնք նոյն վայրկեանին անշարժ կեցած էին : Այս տեսարանին քով ու-

րիշ մը կար անոր պէս, անոր քով ալ նոյն պէս և այսպէս շարունակաբար, այնքան հեռու որքան կրնար տեսնել աչքը և այնքան բազմաթիւ որքան կրնար երեւակայել միտքը : Մ. Սէնթեղի աջ կողմը, աշտարակի մը ծայրէն յորդ Լոյս մը կը փայլէր : Անմիջապէս ձերունի գիտականին դէմ գտնուող երկու մարդիկը, վայրկեանական և արագ շարժում մը կատարեցին, առանց իրենց ձեռքի կտաւը ձգելու, իւրաքանչիւրը անկիւնէ մը սահեցան գետին հարթ հաւասար, իրենց ստուերային արագութեամբ : Կտաւը ընականաբար ենթակայ այս մղման, կը դառնար ինքն ալ երկու մարդոց արշաւը սահմանուած էր կտաւին տարածութեան չափով, այսինքն շուրջ 100 մեթր ընդարձակութեան մը վրայ : Ցիցերը տկար ընդգիւծութիւն մը միայն կ'ընէին : Կտաւը ամբողջովին դարձած և դարձեալ հողին վրայ դրուած էր . բայց հակառակ կողմէն և իր առջի տեղին քովը ուրիշ տեղի մը վրայ : Կտաւին մէկ կողմը ձիւնի պէս ճերմակ էր, և միւս կողմը ածուխի պէս սև : Այն վայրկեանին երբ սև երեսը հողին կուգար, Լոյսը կը մարէր : Յետոյ անմիջապէս կը փայլէր նորէն : Ուղեղայինները ուշադիր այս նշանին որ իրենց փորձը կ'առաջնորդէր, կը խոյանային հակառակ ուղղութեան վրայ և յետոյ կը դառնային, այսպէս արագ արագ : Կտաւին սև կողմը, իր վայրկեան մը առաջ երկինքի կողմը դարձած էր, դարձեալ հողին կը դարձուի և ճերմակ կողմը կը վերերելի : Եւ Լոյսի նշանին հետ, հազարաւոր, հարիւր հազարաւոր մարդիկ կը կատարեն այս շարժումը, միանուագ և դիւրին այնքան, որքան մինքն չպիտի կրնայինք երկու հոգի դարձնել գետինը փռուած սաւան մը : Այս տարօրինակ գործողութիւնը շարունակուեցաւ մօտ քսան մը, առանց ընդհատելու,

բացի լոյսի նշանէն որմէ հարկաւ իրենք բան մը կը հասկնային, յետոյ յանկարծ ամէնքն ալ կեցան:

— Այս վայրկեանին համար վերջացած է, ըսաւ Մեծ-ծերունի-պարոնը: Հրատի բընակիչները հասկցան մեր նշանները: Հիմա կարգը մեր աւտոեղագէտներունն է ուշադրութեամբ դիտելու իրենց մոլորակային թղթակիցներուն շարժումը և լոյսի այս խաղերը չկորսնցնելու զորս կը նշմարեն Հրատի մէջէն, իրենց հեռագրիտակներով:

— Բայց Հրատի բնակիչները ձեր բրածին պէս չեն ըներ:

— Ոչ, և բնական պատճառով մը: Աներեւակայելի կերպով դիւրին է լուսեղէն ջահեր շարժել, որքան բաղմամբ և շատ ալ ըլլան, քան գործածել հարիւր հազարներով մարդիկ, ինչպէս տեսաք քիչ առաջ: Բայց արեւին հետ մեր դէրքը մեղ կարգիլէ մեր դրացիներուն գործածած միջոցը գործածելէ:

— Իրաւ է: Երկիրը արեւին և Հրատին միջև գտնուելով կը մնայ արեւէն արձակուած լոյսին մէջ ողողուած, այնպէս որ արհեստական լոյս մը, նոյնիսկ շատ տարածուն, Հրատէն չտեսնուելու վտանգին ենթակայ է:

— Մեր նախնիք սկզբունքով փորձած են այս միջոցը, քանի որ դարերու ընթացքին մէջ նշմարուած էր թէ լուսեղէն նշաններ կ'ըլլային Հրատէն: Այս նշանները կը վառէին ու կը մարէին: Այնպէս որ երկրէն ալ նոյն ձեւով պատասխանեցին, աւակաւեցնելով լոյսի ուժը, սակայն ի զուր: Նշանները չէին կրնար նշմարուիլ հոնկից, այն պատճառով զոր յայտնեցինք, քանի որ մեր երկրին դէրքը այնպէս է որ Հրատի բաղդատմամբ կերպով մը մենք կռնակներս դարձուցած ենք Արեւին: Երկար և ապարդիւն փորձերէ ետք, հին աստղագետ մը կարծիք մը յայտնեց, որ գրդուած էր նոյն իսկ Հրատի երեւոյթէն: Նշմարելով որ Հրատի երկու բեւեռներուն վրայ ձիւնի ճերմակները եղանակին աղղեցութեամբ կը փոխուին, մարդը մտածեց թէ կարելի պիտի ըլլար այդ մոլորակին բնակիչներուն ուշադրութիւնը հրաւիրել, երկրին ու է ճերմակ մէկ մակերեսը կենդանի և կանոնաւոր ձեւով մը փոփոխելով: Ասիկայ սաղմն էր

այն գաղափարին զոր այսօր մենք կը գործադրենք: Կը հաւատաք որ դարեր պէտք եղաւ գործադրելի ընելու համար այդ գաղափարը, նկատի չառնելով լուսաւոր նշաններու յաւիտեական անյաջողութիւնն իսկ: Կամաց կամաց սակայն գաղափարը առաջացաւ, և գիտնականներ զտնուեցան որոնք իրենց կեանքը նուիրեցին այդ բանին:

— Կը հասկնամ, քանի որ դիւրին և մէկ հարուածով ձեռք բերելիք բան չէ այս տեսակ հաղորդակցութեան մը բանալին ձեռք ձգել:

— Նախ, երկար ատեն պէտք եղաւ շատ մը փորձեր կատարել մեր նշանները նշմարել տալու համար և վստահ ըլլալու համար թէ նշմարած են:

— Էականը հոտ է արդէն:

— Ընտրեցին հարթ, հորիզոնական տեղ մը, բոյսէ, ծառէ զուրկ, և ճերմակ աւազով ծածկուած: Այս դաշտն է զոր ցարդ կը գործածենք: Մարդիկ հաւաքուեցան բաղմամբ խումբերով այս փորձի խաղաղական դաշտին վրայ, սև կտաւներու մեծ կտորներ առնելով: Այս բոլոր մարդիկը կարելի եղածին չափ պիտի աշխատէին, պիտի փորձէին դարձնել ու դարձնել իրենց կերպասները այն ձեւով որ հողը երեւար յաջողաբար սև ու ճերմակ: Հակառակ գործին անբաւականութեան, Հրատի բնակիչները, որոնք միշտ ուշադիր են եղեր, նշմարեցին նշանը և պատասխանեցին: Չէ՛ք կրնար երեւակայել ուրախութեան և խանդավառութեան այն անհուն տպաւորութիւնը, երբ իրողութիւնը համոզումով հաստատուեցաւ: Այն օրէն ուր հաստատուեցանք թէ Հրատ մոլորակին մարդիկը կը տեսնէին, ուշադիր կ'ըլլային մեր այս նշաններուն, սկսանք բնական է թէ նոր միջոցներ խորհիլ թէ ինչպէս կարելի պիտի ըլլայ մեր մտածումները և գաղափարները հասկցնել և փոխադարձաբար հասկնալ անոնց պատասխաններուն բացատրութիւնը:

— Շատ շահեկան է այդ, Մեծ-ծերունի-պարոն:

(Շարունակելի)

ԱՐՏՈՑԱՍԷՐ ԱՐՄԷՆ ԼՈՒՍԻՆԵԱՆ

Տպագրութիւն — ձեռն. ԳՐԱՏԱՆ

Պապ. Ալի ցաթէսի Բ. 38

ՄԵԾ ՎԱՃԱՌԱՍՈՒՆ

24. 6. 92. 6. 9. 1. 9. 3.

Արանց, Կանանց եւ Տղայոց

ՊԱՏՐԱՍ ԵՒ ԶԱՓՈՒ ՎՐԱՑ

Գ. ԷՐՄԵՆԵԱՆ ԵՒ ԸՆԿ.

4. Պոլիս, Սուրբան Համաւ, Բօսիալեան իւան

Սոյն վաճառատունը, որ տարիներէ ի վեր իր ուղղութեամբ, ապրանաց տու-կունութեամբ և գիներու անմրցելի ա-ժանութեամբը շահած է բոլոր իրեն գի-մող յաճախորդաց վստահութիւնը, այս անգամ ձմեռուան յատուկ ընտիր հա-գուստներու, կանանց թելըրիկներու և տղայոց չիք և գիմացիկոն ֆուքիւններու ճովա մթերք մը պատրաստ ունի, որ ջերմապէս կը յանձնարարուի ամէն ա-նոնց, որոնք պէտք ունին ներկայ եղա-նակին հագուստի և ուրիշ նմանօրինակ պիտոյից :

Սակարկութիւն չկայ, թիւը 2 դրշ է.
Գաւառներէն յանձնարարութիւնք
փութով կր կատարուին .

35-50



Կ. ԵԱՎՐՈՒԵԱՆ Յ. ԻՍԱԳՈՒԼԵԱՆ

ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

ԹԵՅԻ ԽԱՌՆՈՒՐԴՆԵՐ

ՄԻՇՏ ԱՃԱՆ ՈՒ ԹԱՐՄ ԵՆ



ԵԱՎՐՈՒԵԱՆ ԻՍԱԳՈՒԼԵԱՆ

ԸՆՏԻՐ, ԱՃԱՆ

ԵՒ

ՀՈՏԱԻԷՏ ԹԵՅԵՐ

Կ. Պոլիս, ՊահճեԳափու, Ճեյալ-Պեյ խան, քի. 10



Ա Ն Տ Ե Լ Ի Պ
Հ Ա Ժ Ա Ռ Ա Տ Ո Ր Ն
ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ՆՈՒԱԳԱՐԱՆԱՅ ԵՒ ՊԵՏՈՅԻՑ

Մ Ա Ս Ն Ա Ի Ռ Վ Ա Ր

Ֆոնոկրաֆի Է. Գրաններու Կրամֆոնի
Է. Երկկողմ Բլագներու, Կեդրոնա-
տեղի Պահճե Գաբու, Հաճի Պեքի-
Էմեմտի կից, Եալտըզ խանի տակ
քի. 2: Մասնաճիւղ Պահճե Գաբու
քի. 52:

Վաճառատանս
30 տարիներէ
ի վեր ծախած
ապրանաց տո-
կունութեան և
թէ նորոգու-
թեան մասին
չահած համբա-
ւը բազմաթիւ

շաճախորդներուն ծանօթ ըլլալով, կը փութանք յայտարարել թէ՛ այս անգամ նոր
գրութեամբ և կատարելագործեալ լաւ տեսակ Կրամֆոններ և երկու կողմն ալ զատ
զատ եղանակներով Բլագներ բերել տուած ենք, և կրնանք մրցիլ հրապարակի վրայ
գտնուած բոլոր նմանօրինակ ապրանաց հետ, թէ՛ տոկունութեամբ, ճայնի առաւելու-
թեամբ և թէ՛ աժանութեամբ: Գաւառներէն եղած յանձնարարութիւնք կը կա-
տարուին ամենայն ուշադրութեամբ և հոգածութեամբ:

Անգամ մը փորձելը բաւական է հաստատելու համար մեր ըսածները Դիմել
կեդրոնատեղին: